ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/48

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Կ. Գևորգյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4»

ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3 արձանագրության 4.1, 4.2 և 4.3 կետերով կայացված որոշումները:

Բողոքներ քննող անձի 26.06.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 09.07.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 09.07.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2019թ.-ին:

2. <u>«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ֆոտոն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Ֆոտոն» ՍՊԸ պաշտոնապես ներկայացնում է բողոք, որով որպես սույն բողոքի վեճի առարկա է հանդիսանում ՀՀ ՊՆ կողմից 16.05.2019թ. պահածոյացված կարտոֆիլի մատակարարման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2018թ. հունիսի 3-ի ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կյացված որոշումը:

ՀՀ ՊՆ կողմից պահածոյացված կարտոֆիփ մատակարարման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթին մասնակցել են 3 կազմակերպություն Ֆոտոն ՍՊԸ, Աքվատիկ ՍՊԸ և Արարատ Սենդի կոմբինատ ՍՊԸ: «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2018թ. հունիսի 3-ի ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ Աքվաուիկ ՍՊԸ-ի, որի կողմից 1 ներկայացված հայտի ապահովման բանկային Երաշխիքի գործողության ժամկետը պակաս էր 90 աշխատանքային օրից, ուստի հանձնաժողովի որոշմամբ վերջինիս հայտը մերժվեց:

4.1 10.06.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ

ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արարատ Սենդի Կոմբինատ» ՍՊԸ:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 30 հոդվածի 1 մասի համաձայն. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32 կետի 9 ենթակետի համաձայն. եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման.

12 ենթակետի համաձայն, հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

526-Ն որոշման 45 կետի համաձայն. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սակայն, ՀՀ ՊՆ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է վերևում նշված հոդվածները, քանի որ

հանձնաժողովը պետք է մերժեր 1 տեղ զբաղեցրած մասնակից «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ, քանի որ նա հայտում ներառվող իր կողմից հաստատվող փաստաթղթերը, տվյալ դեպքում կանխիկ փոխի ձևով ներկայացված հայտի ապահովումը չի ստորագրել էլեկտրոնային ստորագրությամբ:

Եվս մեկ անգամ նշենք, որ ՀՀ ՊՆ մրցույթի հանձնաժողովը խախտել է 526-Ն որոշման 32 կետի 12 ենթակետը և 45 կետը:

Կցանկանանք նաև նշել, որ կանխիկ փողի ձևով ներկայացրած փաստաթղթում կան նաև այլ թերություններ, դրանցից մեկ այն է, որ այդ թուղթը որևէ մեկի կողմից ստորագրված չէ, ոչ վճարողի ոչ բանկի աշխատակցի կողմից, բավականին տարօրինակ հարցական նշանին նմանվող նշաններ են կան այդ թղթը վրա, որը կասկածի առիթ է տալիս այս թղթի օրինական լինելու վերաբերյալ:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 27.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 08.07.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր առ 27.05.2019թ. գրությամբ ներկայացված՝ <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4>> ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ <<Ֆոտոն>> ՍՊ ընկերության բողոքի վերաբերյալ հայտնում եմ, որ ընթացակարգի մասնակից <<Արարատ Սննդի Կոմբինատ>> ՍՊ ընկերությունը որպես հայտի ապահովում՝ ներկայացրել է կանխիք փողի ձևով ներկայացված հայտի ապահովում:

ՀՀ կառավարության 526-Ն որոշմամամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային կտրոնը չի հանդիսանում մասնակցի կողմից պարտադիր հաստատման ենթակա փաստաթուղթ, ուստի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4>>

ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը <<Արարատ Սննդի Կոմբինատ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել է բավարար:»:

Բողոքներ քննող անձին կից ներկայացրել են ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել նաև «Արարատ Սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն և «Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից):

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 03.06.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արարատ Սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ առաջին տեղն զբաղեցնող մասնակցին առաջարկվել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արարատ Սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջինիս կողմից ներկայացվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Գործում առկա «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը (վճարման հանձնարարագրի N 000769 անդորրագիրը) ֆինանսական կազմակերպության (բանկի) գործարքը ձևակերպող աշխատակցի կողմից ստորագրված չէ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա

ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքով «Արարատ Դարբինյան» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արարատ Սննդի կոմբինատ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված/հաղթող մասնակից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջինիս կողմից ներկայացվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Գործում առկա «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը ստորագրված չէ:

Անդրադառնալով «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովմանը (վճարման հանձնարարագրի անդորրագիր N 000769), Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ.

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.10.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» հավելվածի (այսուհետ՝ Կանոններ) 15-րդ կետի համաձայն՝ ֆինանսական կազմակերպությունը «Վճարման հանձնարարական» փաստաթուղթը կիրառում է հաճախորդի կողմից ֆինանսական կազմակերպությանը ներկայացված՝ վճարման կամ փոխանցման կարգադրության ընդունման և վերջինիս պահանջների համաձայն կրեդիտային փոխանցումներ կատարելիս.

1) երբ վճարումը կամ փոխանցումը կատարվում է անկանխիկ եղանակով վճարողի բանկային հաշվից, որի արդյունքում կրեդիտագրվում է շահառուի բանկային հաշիվը, կամ

2) վճարողի կողմից կանխիկ դրամական միջոցների տրամադրմամբ, որի արդյունքում կրեդիտագրվում է շահառուի բանկային հաշիվը:

Կանոնների 16-րդ կետի համաձայն՝ «Վճարման հանձնարարական» փաստաթուղթը կազմվում է երկու օրինակից՝ մեկը պահվում է ֆինանսական կազմակերպությունում, իսկ մյուսը տրվում է հաճախորդին, եթե հաճախորդին չի տրամադրվում գործարքի կատարումը հավաստող այլ փաստաթուղթ (օրինակ՝ անդորրագիր): Ընդ որում՝ հաճախորդին տրամադրվող վճարման հանձնարարականով կատարված գործարքի կատարումը հավաստող փաստաթուղթը պետք է առնվազն պարունակի այն դաշտերը, որոնք լրացվել են վճարման հանձնարարականում, բացառությամբ «վճարողի ստորագրությունը» և «վճարողի կնիքը» դաշտերի:

Իսկ արդեն Կանոնների 17-րդ կետով «Վճարման հանձնարարական» փաստաթղթի համար սահմանվում են վավերապայմանները և դրանց լրացման կանոնները, մասնավորապես՝

«Վճարման հանձնարարական» փաստաթղթի նվազագույն վավերապայմաններն են ի թիվս այլնի, նաև՝ վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և (կամ) գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, ինչպես նաև ստորագրությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, դրանք համադրելով գործում առկա «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման հետ, Բողոքներ քննող անձը փաստում է, որ վճարման հանձնարարագրի N 000769 անդորրագիրը ստորագրված չէ ֆինանսական կազմակերպության (բանկի) գործարքը ձևակերպող աշխատակցի կողմից, որն էլ Կանոնների 17-րդ կետի հիմքով պարտադիր վավերապայման է: Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև նշել, որ թեև վճարման հանձնարարագրի N 000769 անդորրագիրը պարունակում է վճարման հանձնարարականը ստացող ֆինանսական կազմակերպության՝ գործարքը ձևակերպող աշխատակցի անունը, ազգանունը և գործարքը ձևակերպող աշխատակցին նույնականացնող դրոշմակնիքը, սակայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով պարտադիր կերպով վճարողի օրինակում, որն էլ ներկայացվել է Մրցույթի գնահատող հանձնաժողովին, պետք է առկա լիներ նաև բանկի աշխատակցի ստորագրությունը, քանի որ «ինչպես նաև» բառերից հետո

շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է հայտի ապահովումը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով հայտի ապահովման շտկման հնարավորություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արարատ Սննդի կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը (վճարման հանձնարարագրի N 000769 անդորրագիրը) ֆինանսական կազմակերպության (բանկի) գործարքը ձևակերպող աշխատակցի կողմից պետք է ստորագրված լիներ, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա էր մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի հայտը բավարարելու մասին որոշումն իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 26.06.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 3 արձանագրության 4.1-րդ, 4.2-րդ և 4.3-րդ կետերով կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**